ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՐԱՄԱՆ

№ 1-Լ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՄ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 13[1] հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել՝

1) այլ պետության քաղաքացիություն ունենալու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելված 1-ի.
2) այլ պետության քաղաքացիություն ունեցած լինելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելված 2-ի.
3) այլ պետության քաղաքացիություն ունենալու կամ ունեցած լինելու մասին հայտարարությանը կցվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ստորագրող
ՆԵԼԼԻ ԴԱՎԹՅԱՆ
7111910575

2026-03-16 13:34:28 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ո կողմից

Ն.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 2
ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության
ծառայության պետի
2026 թվականի մարտի 16-ի
N 1 - Լ հրամանի

Հայտարարություն

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝ ----------

(հայտարարություն տրվող անձի անունը,ազգանունը,հայրանունը)

Ծնված՝ ----------

(ծննդյան օրը , ամիսը,տարին)

ՀՀ քաղաքացու անձնագիր/նույնականացման քարտ/ ----------

(անձը հաստատող փաստաթղթերի սերիան,համարը,տրման ամսաթիվը)

Սույնով հայտնում եմ որ՝

ունեցել եմ ----------

(նշել պետություն/ներ/ը,որի քաղաքացին հանդիսանում է հայտարարություն տվող անձը)

քաղաքացիություն, սակայն ---------- պետության

/պետությունների/ քաղաքացիությունը դադարեցվել է ----------թվականին:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը՝

1
2
3

Հայտարարություն տվող՝---------- ----------

(Անուն,Ազգանուն) (ստորագրություն)

« » ----------202 թ

Հավելված 1
ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի
2026 թվականի մարտի 16-ի
N 1 -Լ հրամանի

Հայտարարություն

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ես՝ ----------

(հայտարարություն տրվող անձի անունը,ազգանունը,հայրանունը)

Ծնված՝ ----------

(ծննդյան օրը , ամիսը,տարին)

ՀՀ քաղաքացու անձնագիր/նույնականացման քարտ/ ----------

(անձը հաստատող փաստաթղթերի սերիան,համարը,տրման ամսաթիվը)

Սույնով հայտնում եմ, որ ունեմ _____
քաղաքացիություն: (նշել քաղաքացիության պետությունը /պետությունները/)

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը՝

1
2
3

Հայտարարություն տվող՝---------- ----------

(Անուն,Ազգանուն) (ստորագրություն)

« » ----------202 թ

Հավելված 3
ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության
ծառայության պետի
2026 թվականի մարտի 16-ի
N 1-Լ հրամանի

ՑԱՆԿ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՄ ՈՒՆԵՑԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

Սահմանադրությամբ կամ օրենքով որոշակի պաշտոն ստանձնելու համար միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիության պահանջ սահմանված լինելու դեպքում այդպիսի պաշտոնին հավակնող կամ այդպիսի պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլ պետության քաղաքացիություն ունենալու կամ նախկինում ունեցած լինելու մասին տեղեկությունը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին ներկայացնելիս հայտարարությանը կցվում են՝

1. հայտարարությունը ներկայացնելու պահին օտարերկրյա պետության քաղաքացիություն ունենալու դեպքում՝
   1) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
   2) Օտարերկրյա պետության քաղաքացու անձնագրի, իսկ դրա բացակայության դեպքում՝ օտարերկրա պետության իրավասու մարմնի կողմից տրված՝ այդ պետության քաղաքացիություն ունենալը (ձեռք բերելը) հավաստող փաստաթղթի /տեղեկանք, քաղաքացիության մասին վկայական և այլն/՝ օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությունը:

2. Հայտարարությունը ներկայացնելու պահին օտարերկրյա պետության քաղաքացիությունը դադարեցված լինելու դեպքում՝
   1) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույականացման քարտի պատճենը,
   2) Օտարերկրա պետության իրավասու մարմնի կողմից տրված՝ այդ պետության քաղաքացիությունը դադարեցված լինելու հավաստում՝ տեղեկանք կամ այլ փաստաթուղթ՝ օրենքով սահմանված կարգով հաստատված՝ տվյալ պետության քաղաքացիությունը դադարեցրած լինելու ժամկետի մասին նշումով, և դրա օրենքով սահմանված կարգով հայերեն թարգմանությունը:

Առաքման ցուցակ

☐ ՓՇԱՎ

☐ ՄՔԾ

Հրամանը կազմեց և համակարգեց ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության միգրացիայի և քաղաքացիության ոլորտի քաղաքականության իրականացման վարչության պետ Իրինա

3/13/2026

X

ԻՐԻՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Մկրտչյան Signed by: MKRTCHYAN IRINA 7210820132